Թիւ․ 35․

# ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

## ԴԻՊՈՒԱԾՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆՑ

1813․

19․ 20․ 21․ 22․ ՄԱՅԻՍ․

### ԻՆԿԻԼԴԷՐՐԱ․

Լոնդրա․ 5 Մայիսի․

Համառօտութիւն Ինկիլիզեան տարեգրութեան․

Մայիսի 4ին Տուլոնեանն կղզեաց թէ լսեցաւ անտերը ռուսական նաւա_րու ձայներ որ կուգար Ֆրանսային կող_մէն, այս նաւերուն ձայնը ոչ թէ ամբո_ղջ 6ը ժամը տեւեց, ու գիշեր մինչև 11ն Այս նաւերուն ձայները դադրեցաւ կանո_նաւորապէս չէր․ մանաւանդ գիտցին թէ այս նա_ւերը կրկնապէս երթալու մէկ քանի յաղթութիւն ըլլալու համար եղած նաւա_րուն վրայ, որ կրկնային Ֆրանսային նա_ւերները ։

Սառնասպանն եղած վերջին խաղաղութեան ինչպէս կ՚ըսեն Կապուտան Ձէլըլը Մար_տոլի Թագաւորին, կրկնեցին Պալխասի, փոխեմ բանակին զօրքը կրկնո_նոյ Բալքանչեա, բանակին կեդրոնը կրկե_նոյ Քոլեղելար, Հայրապետին կողմը եղած զօրքը կրկնոյ Մարքեա ։

8․ Մայիսի ։

Կոստանդնուպոլսոյ Հիւսիսային կողմէն մեծ զօր_ութեամբ անհամար խաղաղութեր ․ Մա_ղուց Ֆրանսացի Ձէնէրալը մէկ զօրա_գունդ․ Սեպաստիան Ձէնէրալը մէկ ձիա_ւորներու գունդով․ Վանտամ Ձէնէրալը յառաջ գալով աստ կերթանկոր դէպ ՚ի Լոլպա գետը, եւ նորա խօսեցին Մաքսիմ_ները անցնելու համար նորէն այս գետին անցքին կողմ ։ Մոսկովներուն պահպանը կրճոյ ապահովութիւն համար եւ քաղի_ցուն մինչև Վուրցասուլին, եւ անկէց նուաճ_ները մեծ անցնելու դէպ․ զէնքով թէ արգելք մուտքերին Ֆրանսացիները եր_ալ գետը անցնելու Մոսկովները պատե_րազմ․ Ֆրանսացիները կրկնեցան Հայա_պետ որ է Ամբունելին աշխը ։

Հա_

Համառօտութիւն մէկ նամակին որ գրուած է Ապրիլի 15 ին Վիթթէմպէրկին առջնէն :

,, Ամսոյս 16 ին Տէսսաուէն ճամբայ ելանք ու գնացինք ծանօվ օգնելու հիր Պռուշներուն Մոսկովներուն՝ որոնք պիտոր զարնըվէին Վիթթէմպէկին հետ՝ առնելու համար աս քաղաքսալ :

Ամսոյս 17 ին սահաթը 4 ին զարնըվեցանք 800 Ֆրանսըզի հետ՝ որոնք դէմ դրին մեզի աղէկ կըտրիճութբ. Ֆրանսըզներէն գերի բռնեցինք մէկ տեղակալ զօրապետմը 78 ալ զինուոր, մեզմէ մեռաւ մէկ օֆֆիչիալմը, 17 ալ վիրաւորվեցաւ. ասոնցմէ զատ 350 հոգիալ զայ եղան վիրաւորվելով մեռնելով. աս պատերազմիս մէջ Պռուշները շատ վնաս քաշեցին, պատերազմը քշեց մինչև իրիկուն :

Վինթճէսթէին Մոսկովի ճէնէռալը պըտըտեցաւ անձամբ Վիթթէմպէրկին չորս կողմը ձիով՝ և շատ անգամ ալ ոտքով դիտելու համար. իմացաւ աս ճէնէռալը թէ աս քաղքի դիրքին աղէկութեը համար շատ դժուարին բանմընէ բռնութբ առնելը. մեր վրայ երկաթի կտորներով լցուն շատ թօփեր նետեցին բերդէն :

Ամսոյս 18 ին առաւօտեան սահաթը 8 ին Վինթճէսթէին ճէնէռալը սկսաւ թօփոտել Վիթթէմպէրկը, և ինքը անձամբ նշանկառներ բերդը ծեծելու համար : Քօծաթաւքոուսծքի ճէնէռալը որ պաշարէրէր կամուրջին գլուխը՝ հրաման գնաց որ ինքնալ անկից զարնըվի : Ան մարդը որ խրկըվեցաւ բերդը Մոսկովներուն կողմէն խապար բերելու համար անձնատուր կըլլան թէ չէ, բերաւ մեզի հպարտութբ լցուն խապարմը. մեր թօփերը այնչափ շատ վնասմը չըրաւ Վիթթէմպէրկին՝ վն զի շատ հեռու էինք անկից. 50 կիւլլէի չափ ինկաւ Վիթթէմպէրկին մէջ, ու բռնկցուցին 10, 12 տեղ. մեր փափաքանը էր կամուրջը այրել, բայց շատ դժուարին բան էր պատճառաւ կամուրջի գլխին, և զանազան ամբոցներու որ շիներէն Ֆրանսըզները Էլպա գետին և Վիթթէմպէրկին մէջ տեղը ,, :

Ինկիլիզի գաղէթաներուն մէջը կըսվի թէ՝ ոմանք կըկարծեն որ միջնորդ ըլլայ Մոսկովը հաշտեցունելու համար Միացեալ նահանգները Ինկիլդէռայի հետ, և կըկարծեն թէ 'ի գործ դրվի աս հաշտութիւնը, բայց մեր տէրութիւնը չիկրնար յանձն առնուլ աս բանս առանց մեծ ամօթիմը :

(Մօնիթօռ :)

## ՍԱՔՍՈՆԻԱ.

Սաքսոնիայի սահմանագլուխներէն 3 Մայիսի :

Սեանտաուին շրջանակներէն կըգըրվի աս հետևեալ խապարները Ապրիլի 23 ին :

Պռուշին գունդը՝ որոնց վր կըհրամայէ Թիհուսմէն ճէնէռալը հետ այրելուն քաղքի տուներուն կէսէն աւելի թօփոտելով, և շատ ամրութիւններ բլրունելէն ետև, կարծեց թէ կըրնայ առնուլ անկից ետև դիւրութըմը խըրխըխուշ ընելով, անոր համար Ապրիլի 21 ին յարձակեցաւ ասոր վր, և խելմը ժամանակ թօփոտելէն ետև, վըռընտվեցան Վիթթէմպէրկին առջևէն շատ մարդ զայ ընելով պարիսպին առջև : Ապրիլի 22 ին, 23 ին շատ հանդիստ էր հոս :

(Օրագր. Փարիզու :)

## ՎԵՍՏՓԱԼԻԱ.

Քասսէլ. 20 Ապրիլի :

Հոստեղի թագաւորը ամսոյս 18 ին ըրաւ աս հետևեալ վճիռը :

,, Մօվիլլօն զօրապետը որ կըկենայ Հարցին կողմերը ինկած է իրեն պաշտօնէն, որովհետև առանց այնպէս սաստիկ բռնադատվելու թշնամիներէն՝ թողուց իրեն կեցած տեղերը թշնամիներուն ձեռքը : ''

Ամսոյս 16 ին ըրաւ աս վճիռնալ, թէ օֆֆիչիալներուն վարձքը հախը որոնք գերի ինկան պատերազմին մէջ Մոսկովին ձեռքը, տըրվի իրենց կընիկոցը, և թէ աս կնիկները համարձակ կարենան ներկայանալ գանձապետին խաղնափարէն առջև՝ ուզելու համար իրենց էրիկներուն վարձքը :

(Մօնիթօռ Վէստֆալիոյ :)

## ՄԱՃԱՌՍՏԱՆ.

Զէմլին. 15 Ապրիլի :

Շատ ժամանակ չէ որ պատահեցաւ մէկ ցաւալի դիպուածքմը Սըրֆերուն երկիրը : Կար մէկ գեղացիմը՝ որուն հայրը մեռաւ

իրէն

իրեն մահուամբը մէկ գեղլիմը մէջ քիչմը հեռու Թօփօլայէն · աս գեղացին ուզելով թաղել իրեն հայրը սովորական հանդիսութե̄ ինչպէս որ ամէնքը կընէին , գնաց գտաւ ան գեղին ծխատէր քահանան , և աղաչեց որ թաղէ իրեն հայրը , նաև հարցուց ալ թէ որչափ ըստակ պիտոր խարճէ : Եւ որովհետև աս երկիրները որոշված չէ մէկ գինմը թէ որչափ պիտոր տըրվի մեռելաթաղին , անոր համար աս քահանան ուզեց 50 ղուշ · բայց ողորմելի գեղացին հօրմէ մօրմէ որբ մնացած՝ 30 ղուշէն աւելի մէկ ստակմընալ չունէր տալու , քահանան ոտք կոխեց ու ըսաւ մինչև որ չտաս որչափ որ կուզեմ չեմ թաղեր քուկին հայրդ , անատենը տըղուն ճարը հատաւ և չէր գիտեր թէ ինչ ընէ : Խորատ տըվին իրեն մէկ քանի բարեկամները որ երթայ Թօփօլա ուր տեղը կըկենայ Սըրֆերուն իշխանը Քձէրնի Ճէօրճիօն , ու իմացընէ իրեն ողորմելութիւնը · գնաց աս գեղացին գտաւ իշխանը , ու իմացընելէն ետև իրեն նեղութիւնը ու ողորմելութիւնը , աղաչեց որ տայ իրեն 20 ղուշ՝ ոտք զի իրեն քովը գտնըված ըստակին հետ մէկ տեղ դնէ ու տայ ժողովրդապետին թաղելու համար իրեն հայրը · շուտմը աս իշխանը տըվաւ որչափ որ կուզէր գեղացին , բայց հրամայեց ասոր՝ թէ երբոր փորել կուտաս գերեզմանը հօրդ մարմնոյն համար , փորէ մէկ ուրիշմընալ անոր քովը , և ապսպրեց գեղացիին թէ աս սահաթը թաղումը ըլլայ · վերէմ կուզեմ ըսաւ հոն գտնըվիլ թաղման ժամանակը · երբոր հասաւ թաղման որոշեալ ժամանակը՝ աս իշխանը իրեն պահապաններովն ու մէկ պարապ Թապուտովմը եկաւ հասաւ հոն , և երբոր գեղացիին հօրը մարմինը ինչեցուցին գերեզմանին մէջ , Քձէրնիքէֆ Ճէօրճիօ իշխանը՝ իրեն գլխացը կանչեց քահանան ու հարցուց , առի՞ր 50 ղուշը լըման աս ողորմելի գեղացիէն , և թէ քանի՞ տղաք ունիս , քահանան ալ պատասխան տըվաւ , հըրամմերեա աղի , և 5 տըղայ ունիմ , բարի է ըսաւ իշխանը , ես հիմայ զքեզ կենդանի կենդանի պիտոր թաղեմ՝ որպէս զի չըլլայ թէ քու տղաքդ ալ աս նեղութե̄ ու ողորմելուե̄ մէջ իյնին՝ որուն մէջ ինկաւ աս խեղճ գեղացին , եթէ յանկարծակի անոնց չթողուս այնչափ ըստակ որ բաւական ըլլայ քուկին թաղմանդ · ըսկսաւ լալ քահանան և աղաչել իշխանը որ թողութիւն ընէ իրեն , և ետ դարձընէ իրեն հրամանը բայց չկրցաւ · իշխանը հրամայեց իրեն պահապաններուն կապել զասիկայ ու դնել Թապուտին մէջը , և այսպէս թաղեցին աս ողորմելի քահանան կենդանի կենդանի · 3 սահաթ անցնելէն ետև երբոր գնացին իշխանին պահապանները , շուտմը հոնտեղի բնակիչքը բացին աս գերեզմանը խալըսելու համար աս քահանան , բայց մեռած գըտան : (Գազէթ · Բրէսլաւուի :)

## ՖՐԱՆՍԱ·

### Փարիզ· 12 Մայիսի:

Կայսրուհին կառավարը Ֆրանսայու՝ առաւ աս հետևեալ խապարները բանակէն ամսուս 6 ին իրիկունը :

Նաբօլէօն կայսեր բանակը կըկենար Վալտէհիմ· փոխարքային բանակը էր Էրթկըտօրֆ · Լօրիսթօն Ճէնէրալինը էր Օպքհալթձ · Մօրքային Բրինչիբէն կըկենար Լիբսիային ու Թօռկաուին մէջ · Պէռթռանտ Ճէնէրալին բանակը էր Միթվէյտային մէջ · Բռէճիօյի Տուքային գունդը էր Բէնիկ · Մոսկովները այրեցին Վալտհէյմին կամուրջը՝ որ էր մէկ գեղեցիկ կամուրջմը փայտէ շինած և մէկ աչքով · ասոր այսպէս ըլլալը՝ Ֆրանսըզներուն առաջ երթալը մէկ քանի սահաթմը ուշացուց , և անդին կողմէն Մոսկովին վերջապահ գունդը դէմ կըդնէր ու թող չէր տար որ անցնին անդին Ֆրանսըզները · աս կամուրջը այրած ըլլալով փոխարքան պաշարել տըվաւ աս գեղը աջ կողմէն ու ձախ կողմէն · Մոսկովները կեցերէին աղէկ դիրքովմը մէկ քանի բարձր տեղերու ետևներ , փոխարքան կըրակ ըրաւ ասոնց վրայ ու վրանին երթալ ըսկսաւ , խելմը ժամանակ պատերազմ ընելէն ետև առաւ աս ամուր տեղը Մոսկովներուն ձեռքէն : Աս պատերազմին մէջ 200 հոգի մեռան Մոսկովներէն :

Մոսկովները անցան Էլպա գետին անդին կողմը այնչափ փութալով՝ որ ձգեցին ասդին եղերքը շատ նաւակներ , ու խեղդմընալ իրենց կահկարասիներէն : Մայիսի 2 ին եղած պատերազմին մէջ վիրաւորվեցան Պէրէնժէր ու Բրէթէլ Ֆրանսըզին կող_

կողմէն երեւելի օֆֆիչիալները՝ բայց խիստ թեթեւ։

Տեղեկութիւն մայիսի 2 ին եղած պատերազմին վրայ, ինչպէս որ կգրէ մէկ օֆֆիչիալմը Պլուշէր Պռուսի Ճէնէռալին գունդէն։

Լուծէր ու Լուբբէ գետերը երկու բանակին թեւերէն խելմը հեռու էին, մեր դիմացը կար մէկ գեղմը՝ որուն կըտիրապետէին ֆրանսըզները․ պատերազմը ըսկըսաւ էն առաջ աս գեղին հետ, և աս գեղը ֆրանսըզներուն ձեռքէն առաւ աջ թեւը Պլուշէր Պռուսի Ճէնէռալին գունդին, աս գունդիս ձախ թեւը գրոհըրվեցաւ մէկ գեղիմը դիմաց՝ ուրտեղ թշնամին շատ թօփեր շարեց մեր դիմացը, բայց մենքալ անոնց դէմ չխտկեցինք այնչափ թօփ՝ որչափ որ ունէր թշնամին, և մեր ձիաւորներովը կըպաշտպանէինք աս թօփերը․ քիչ քիչ մեզի հասան ուրիշ օգնութիւններ ալ՝ և ըսկըսվեցաւ պատերազմը, կար մէկ գեղմը որ էր մեր իշխանութեան տակը, բայց ֆրանսըզը անթիւ զօրութիւն բերելով հոն պաշարեց աս գեղը ու առաւ մեր ձեռքէն, բայց ինքնալ հազիւ թէ կէս սահաթիմը չափ կըրցաւ պահել, մենք նորէն զարնըվեցանք ու առինք թշնամիներուն ձեռքէն աս գեղը, ասկից ետեւ ըսկսանք առաջ երթալ ու առինք 2 ուրիշ գեղեր ալ, և այսպէս խիստ մօտեցանք մէկզմէկու․ աս գեղերը առնըվելէն ետեւ խիստ սաստկացաւ պատերազմը վասն զի երկու կողմանէալ խիստ կըջանային աս տեղերուս վրայ, մէկը կըջանար պաշտպանել, մէկալը կըջանար առնուլ, հասան ետեւէ ետեւ բոլոր Պլուշէր Ճէնէռալին գունդերը, և մէկ մասը ձիաւորներուն, և աս միջոցին էին ամէնքը մէկզմէկու մօտիկ․ յաղթութիւնը երբեմն մէկ կողմը կերեւնար ուրիշվել երբեմն մէկալ կողմը, բայց մենք կըտրիճութեամբ դէմ դըրինք թշնամիներուն ու մէկ թիզ խոտըռ տեղ չինկորսընցուցինք։

Կէսօրէն ետեւ սահաթը 6 ին, 7 ին վիրաւորվեցաւ իմին մէկ ոտքս, և պարտաւորվեցայ պատերազմէն դուրս ելլալու։ Ես չեմ գիտեր թէ ինչ պատահեցաւ մեր գունդին ձախ թեւը, բայց կըկարծեմ թէ ան կողմնալ երկիր վառօրկեցանք, աս պատերազմէս ետեւ ինչ պիտոր ծագի չեմ գիտեր․ թշնամին մտաւ Լիբսիա․ իրիկվան դէմ հասաւ օգնութիւն մեծ բանակէն, և Միլօրիատովիտք Մոսկովի Ճէնէռալին գունդնալ ճամբայ ելած կուգարկոր։

Աս միութիւս մէջ լսեցի թէ պատերազմը լըմընցերէ, և մենք չէթէ միայն յաղթող ենք, այլ երկիր ալ առինք թշնամիին ձեռքէն։ Թշնամիներուն տիրապետելը Լիբսիային մէջ՝ վնեղ կըբունադատեկոր որ քիչմը մէկ դի քաշվինք։

Լամառ Ճէնէռալին Նամակէն օրինակը՝ որ է Ճէնէռալը Բաթալօնիան մէջ եղած զօրացը, և կգրէ պատերազմին մէնծ պաշտօնատէրին։

Ով տէր երբոր ես կերթայի Պարչէլօնային վրայ ընկերութեամբ Սպանիայի ֆրանսըզի բանակին մեծ Ճէնէռալին հետ, վախցայ որ չըլլայ թէ թշնամիները զարնեն Օլօթ քաղաքը, որովհետեւ շատ ժամանակէն պէրի կըսպառնային կոր մեզի․ անոր համար ես ալ հոնաեղը ձգեցի Բթիլթ զօրապետը իրեն գունդովը։ Երբոր հասայ ես իմ տեղս լսեցի թէ Սպանիօլներուն գունդերը մէկտեղ միացերէն ապրիլի 29 ին ու եկեր կեցերեն Թիւառսուրային առջեւը, և ամէնը մէկէն էին 200 ձիաւոր։ Բթիլթ զօրապետը սիրտ ըրերէ առանց վախնալու ու գնացերէ անոնց վրայ, և զարկեր վռնտերէ զանոնք իրենց կեցած տեղերէն․ բռնեցինք թշնամիներէն 20 հոգիկիշափ գերի՝ որոնց մէջը կար մէկ օֆֆիչիալմընալ, իսկ մեռնողները ու վիրաւորվածները խիստ շատ էին․ թէ որ գիշերը վրայ չիհասներնէ տահա շատ աւելի մեռ կըրնայինք ընել թըշնամիներուն․ իսկ մեզմէ 30 հոգիիմը չափ պատերազմէն փախան՝ պատերազմ ընելու ատեն, անոնց մէջը կար 2 օֆֆիչիալ ալ՝ որոնցմէ մէկը մեռաւ․ աս կըտրիճութիւնը շատ մեծցուց ու փառաւորեց Բթիլթ զօրապետին՝ ու իրեն հրամանին տակը եղած զօրքին անունը։ (Մօնիթոր։)

---

Աս գործքս՝ որ է պատմութիւն հիմակվան ատենիս, տասնըհինգ օրը մէյմը կըտըպվի,
'Ի ՎԵՆԵՏԻԿ 'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ։